

**ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈՅԻ ԱՐՉԱԿ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ
ԹԱՐԳԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ծննդյան 200-ամյակի առթիվ)**

Ա.Կ.ԲԱՐԼԵՁԻՉՅԱՆ

Թարգմանական գրականության ավանդույթներն իրենց որոշակի տեղն ունեն հայ ժողովրդի մշակույթի պատմության մեջ՝ սկսած հունաբան դպրոցի գործունեությունից (V-VII դարեր) մինչև մեր օրերը: Այն մեծ հետաքրքրությունը, որ ցուցաբերել են հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչներն այլ ժողովուրդների հոգևոր արժեքների նկատմամբ, արտահայտվել է նաև նրանց թարգմանչական գործունեության մեջ, որը դարձել է հայ գիտական ու մշակութային կյանքի անբաժանելի ուղեկիցը նրա գոյության բոլոր շրջաններում:

Այս առումով առանձնակի ուշադրության է արժանի XIX դարը և, մանավանդ, նրա երկրորդ կեսը: Ուշագրավ է, որ այս շրջանում ֆրանսերենից թարգմանվել են ամենատարբեր ժանրերի ու ծավալի գործեր՝ վեպ, պատմվածք, նովել, պիես, բանաստեղծություն, ճառ, բանախոսություն, գիտական աշխատություններ ու դասագրքեր, ֆրանսիական գրականության հատրնտիրներ և այլն: Հիշատակենք, որ այս ասպարեզում նախապատվությունը պատկանում է արևմտահայերին: Թարգմանությունների մեծ մասը լույս է տեսել առանձին հրատարակությամբ, սակայն քիչ է նաև պարբերական մամուլում մաս առ մաս շարունակաբար տպագրված գրական ստեղծագործությունների թիվը: Շատ գործեր հրատարակվել են մեկից ավելի անգամ կամ ունեցել տարբեր թարգմանություններ, որով հաստատվում է դրանց նկատմամբ հետաքրքրությունը:

Գ.ԶարպՀանայանի¹ և Ա.Ղազիկյանի² մատենագիտություններից բաղկած տվյալները հաստատում են, որ XIX դ. ֆրանսերենից թարգմանված տպագիր գործերն, իրոք, պատկառելի թիվ են կազմում՝ 225 անուն, որոնց զգալի մասը ծավալուն գրքեր են կամ մեկից ավելի հատորներից բաղկացած գրական ու գիտական աշխատություններ: Սակայն եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ Գ.ԶարպՀանայանի մատենագիտությունն ամբողջական է է և ընդգրկում է մինչև 1883 թվականն ընկած ժամանակահատվածը, իսկ Ա.Ղազիկյանի աշխատությունը կիսատ է մնացել, ապա պարզ կդառնա, որ դրանց տվյալներն սպառիչ համարվել չեն կարող, և թարգմանությունների թիվն, անշուշտ, ավելին է: Ուստի, ամբողջական պատկերացում կազմելու համար վերոհիշյալ երկու մատենագիտություններից բացի ուսումնասիրել ենք Գ.Ստեփանյանի «Կենսագրական բառարան»-ի երեք հատորների³, Հայկական խորհրդային հանրագիտարանի տասներկու հատորների⁴ և հանրապետության գրադարանների ընձեռած նյութերը: Մեր հաշվումներով XIX դ. միայն արևմտահայերի կողմից ֆրանսերենից թարգմանված և

¹ Գ. ԶարպՀանայան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, 1883:

² Ա. Ղազիկյան, Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի, Վենետիկ, 1909-1912:

³ Գ. Ստեփանյան, Կենսագրական բառարան, հ. 1-3, Ե., 1973, 1981, 1990:

⁴ Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 1-12, Ե., 1974-1986:

Հրատարակված երկերի ընդհանուր ծավալը կազմում է առնվազն 60000 էջ, որը կրկնակի գերազանցում է իտալերենից, գերմաներենից և անգլերենից կատարված թարգմանությունները միասին վերցրած: Թարգմանությունների մեծագույն մասը՝ մոտ 95 տոկոսը, լույս է տեսել XIX դ. երկրորդ կեսին: Այսպես, 1860-80-ական թվականներին միայն Վ.Հյուգոյի երկերից կատարված հայերեն թարգմանությունները հասնում են 220 տպագրական մամուլի՝ չհաշված բանաստեղծությունների, պատմվածքների, հոդվածների ու ճառերի թարգմանությունները⁵: Քիչ չեն ֆրանսիացի հեղինակների այն երկերի թարգմանությունները, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն տպագրվել (ընթացողի թատերական պիեսներ, անավարտ մնացած գործեր և այլն):

Վերոհիշյալ աղբյուրներից երևում է, որ XVIII դարի համեմատությամբ XIX դարում ա) շեշտակիորեն ավելանում է թարգմանությունների թիվը,

բ) լատիներենից թարգմանություններին փոխարինելու են գալիս եվրոպական նոր լեզուներից կատարվածները և գ) գրաբարը գնալով իր տեղը դիմում է աշխարհաբարին, որը դառնում է թարգմանությունների հիմնական լեզուն: Հետևաբար, թարգմանիչները ևս, կամա թե ակամա, նպաստում են աշխարհաբար գրական լեզվի մշակմանն ու տարածմանը: Թարգմանությունների լեզուն վկայում է նաև, որ արևմտահայ աշխարհաբարը XIX դարի կեսերին արդեն որոշակիորեն ձևավորված գրական լեզու էր: Ինչ վերաբերում է երկրորդ դարակեսին, ապա այն իրավամբ կարելի է համարել համատարած աշխարհաբարացման շրջան, որն ընդգրկել էր նաև թարգմանական գրականության ոլորտը:

Այսպիսով, թարգմանչական գործունեությունը պետք է գնահատել, մի կողմից՝ գրական-մշակութային և ընդհանուր քաղաքակրթական, մյուս կողմից՝ աշխարհաբար հայերենի որակական ձևավորման, հարստացման ու կատարելագործման տեսանկյունով:

Թարգմանված գործերի ընդհանուր ցանկում քիչ չեն ֆրանսիացի նշանավոր հեղինակների գլուխգործոցներն ու ճանաչված երկերը: Ընդհանուր պատկերացում տալու համար հիշատակենք այդ հեղինակների ու ստեղծագործությունների ոչ լրիվ ցանկը. Պիեռ Կոռնել (Պողիկտոս), Ժան Լաֆոնտեն (Առական), Ժան-Բատիստ Մոլիեր (Ժլատը, Ակամա բժիշկ, Պուրսոնյակ, Սերը բժիշկ է, Տարտյուֆ, Բռնի ամուսնություն), Ժակ Բոյյոն (Ճառեր), Ժան Ռասին (Գոթոդիա, Դատամուկներ, Փեղրա), Շառլ Ռոլեն (Հնախոսություն, Խորհրդածություններ դաստիարակության մասին), Ֆրանսուա Ֆենելոն (Տելեմաքի արկածները, Առական, Խրատներ, Վարք նախնի իմաստասիրաց հունաց, Աղջիկների դաստիարակությունը), Ալեն Լըսաժ (Ժիլ Բլաս, Լը Բարբոլե), Ֆրանսուա Վոլտեր (Ալգիրա, Զատիկ կամ ճակատագիր, Միկրոմեգաս, Ընթացք աշխարհիս), Աբբա Պրևո (Մանոն Լեսկո), Պիեռ Օգյուստեն Բոմարշե (Սևիլյան սափրիչ), Բեռնարդեն դը Սեն-Պիեռ (Պոլ և Վիրգինիա), Ֆրանսուա Ռենե դը Շատոբրիան (Ատլա կամ երկու վայրենիների սերը), Ալֆոնս դը Լամարթին (Բանաստեղծական դաշնություններ, Առաջին բանաստեղծական մտորումներ, Ռաֆայել, Գրայիսիլա, Նոր քերթվածներ), Ալեքսանդր Դյումա (Երեք հրացանակիրներ,

⁵ Հ. Գապարյան, Վիկտոր Հյուգոն հայ գրականության մեջ, Ե., 1963, էջ 206:

Մոնսորոյի տիկինը, Անտոնիոս, Կոմս Մոնտե-Քրիստո, Բրաթելոնի կոմսը, Քսան տարի անց, Պոլին), Ալեքսանդր Դյումա որդի (Քամելիազարդ տիկինը), Ալֆրեդ դը Մյուսե (Դարիս զավակի խոստովանությունը, Բանաստեղծություններ), Էթեն Սյու (Փարիզի գաղտնիքները, Թափառական հրեան, Մաթիլդ), Պրոսպեր Մերիմե (Աղավնի), Թեոֆիլ Գոթիե (Հոգեփոխյալը), Լըկոնտ դը Լիլ (Մեղվահավ), Ժյուլ Վեռն (Աշխարհի շուրջը ութսուն օրում, Խորհրդավոր կղզին), Հեկտոր Մալո (Առանց ընտանիքի), Լյուդովիկ Հալևի (Կոնստանդին աբբան), Ֆրանսուա Կոպպե (Տքնություն) և այլն: Թարգմանությունները հիմնականում լույս են տեսել Վենետիկում, Ձմյուռնիայում և Կ.Պոլսում:

Թարգմանիչների մեծ մասը ժամանակի անվանի հայ գրողներ, բառարանագիրներ ու մտավորականներ էին, որոնք քաջատեղյակ էին հայոց լեզվին, գրականությանն ու մատենագրությանը: Նրանցից էին՝ Գաբրիել Այվազովսկին, Արսեն Բագրատունին, Սիմոն Գաբամաճյանը, Խորեն Գալֆայանը, Սամվել Գանթարյանը, Գվիտոն Լուսինյանը, Սրապիոն Հեքիմյանը, Գեորգ և Էդուարդ Հյուրմուզյանները, Մատթեոս Մամուլյանը, Գրիգոր Մսերյանը, Մեսրոպ Նուպարյանը, Գրիգոր Ջիրիկիրյանը, Մանվել Զախյանը, Նահապետ Ռուսինյանը, Հարություն Սվաճյանը, Ստեփան Ոսկանյանը, Տիգրան և Հայկ Տետեյանները, Կարապետ Ություճյանը, Մանվել Քաջունի և շատ ուրիշներ: Հատկապես բեղմնավոր է եղել Մ.Մամուլյանի, Գր. Ջիրիկիրյանի և Կ.Ություճյանի թարգմանչական գործունեությունը:

XIX դ. ֆրանսիական գրականության մեծերի մեջ իր ուրույն ու անկրկնելի տեղն ունի Վ.Հյուգոն, որի երկերը երկրորդ դարակեսին սկսեցին լայն ճանաչում գտնել: Վ.Հյուգոյի առաջադեմ ու համարձակ գաղափարներն ու լավատեսությունը, նրա հարուստ ու պատկերավոր լեզուն և ինքնատիպ ոճը համընդհանուր հետաքրքրություն և հիացմունք չարժեցին: Դրանից զերծ չմնացին նաև հայերը, որոնք մի առանձին ջերմությամբ ու ոգևորությամբ էին ծանոթանում Վ.Հյուգոյի երկերին և ոչ միայն կարդում, այլև մեծ չափերով թարգմանում էին դրանք: Հիշյալ ժամանակաշրջանում հրատարակվածների շարքում նշենք հետևյալները. Լուկրեցիա Բորջա, թարգմ. Տիգրան Հարություն Տետեյան, Ձմյուռնիա, 1862, Անջելո, թարգմ. Տետեյան, Ձմյուռնիա, 1863, Դատապարտյալի մր վերջին օրը, թարգմ. Բարթ. Տ.Մաղաքյան, Կ.Պոլս, 1863, Թշվառները, հ. 1-10, թարգմ. Գր.Ջիրիկիրյան, Ձմյուռնիա, 1868-1870, Քրիստոս ի Վատիկան, թարգմ. Ս.Հեքիմյան, Կ.Պոլս, 1871, Փարիզի աստվածամոր տաճարը, հ. 1-3, թարգմ. Մ.Նուպարյան, Ձմյուռնիա, 1871-1872, Կլոդ Գեո, թարգմ. Խաչիկ Օտյան, Կ.Պոլս, 1872, Ռուի Բլաս, թարգմ. Ն.Ռուսինյան, Կ.Պոլս, 1873, Իմպեռ Գալուա, թարգմ. Ալիքսան Արփիարյան, Կ.Պոլս, 1876, Արքան զվարճանում է, թարգմ. Ա.Խ.Մ., Կ.Պոլս, 1886:

Հատկանշական է, մանավանդ, առաջատար թարգմանիչների ու հրատարակիչների՝ գրական արժեքներին արագորեն արձագանքելու մտահոգությունը ծավալած նպատակասլաց գործունեությունը: Այս առումով բացառություն է նաև Վ.Հյուգոյի «Թշվառներ»-ի պես մեծածավալ երկի հայերեն թարգմանությունը, որն սկսվել է այն ժամանակ, երբ Ֆրանսիայում դեռ նոր էր լույս տեսել բնագիրը, այսինքն, 1862 թվականին: Այս նույն թվականի հունիսի 1-ից արևմտահայ գրականության ու հրապարակախոսության ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Գրիգոր Ջիրիկիրյանը, ձեռնամուխ է

լինում «Թշվառներ»-ի թարգմանությունը և հատվածաբար տպագրում իր իսկ խմբագրած «Ծաղիկ» տասնօրյա հանդեսի էջերում: Վ.Հյուգոյի համարձակ մտքերը դիմադրություն ու թշնամանք են առաջացնում թարգմանչի հանդեպ թուրքական իշխանությունների և արևմտահայ մտավորականության հետադիմական հոսանքի շրջանակներում: « Թշվառներ»-ի թարգմանությունն անավարտ է մնում «Ծաղիկ» հանդեսի էջերում: Ի դեպ, Վ.Հյուգոյի վեպի թարգմանությունը նույն բախտին է արժանանում նաև Ռուսաստանում, ուր տպագրվում էր նեկրասովյան «Սովրեմեննիկ»-ում: Ժողովրդական կրթության նախարար Գոլովինը 1862 թ. ապրիլին Պետերբուրգի գրաքննական կոմիտեին գրում է. «Ցարին ցանկալի է, որ Վ.Հյուգոյի «Թշվառները» վեպի թարգմանության դեպքում գրաքննությունը խստորեն զննի տարրեր իրադարձությունների բովանդակությունը, որոնք հեղինակի կողմից նկարագրված են մեծ տաղանդով, և որի պատճառով ուժեղ ներգործություն են ունենում ընթերցողի վրա»⁶: Վեպի տպագրությունը Ռուսաստանում արգելվում է, իսկ Գերցենը, լսելով այդ մասին, «Կոլոկոլ»-ում դալրույթով գրում է. «Պատկերացրեք, որ մեր թշվառականները արգելել են Հյուգոյի Թշվառները: Ինչպիսի ողորմելի ու նողկալի բարբարոսություն»:

Գր.Զիլինկիյանը, սակայն, շուտով սկսում է վեպի լրիվ թարգմանությունը գծվարին ու շնորհակալ գործը, որն ավարտում է հաջողությամբ և 1868-1870թթ. տասը հատորով ու արժեքավոր առաջաբանով լույս ընծայում Զմյուռնիայում: Հետագայում վեպը վերահրատարակվում է Հինգ անգամ՝ 1885-ին՝ Զմյուռնիայում, 1909, 1922, 1927 թ. Կ.Պոլսում և 1953-ին՝ Բելյուսթում՝ որոշ կրճատումներով: Ա.Չոպանյանի արտահայտությամբ՝ «Հյուգոյի վեպը հայ մարդու համար մի երկրորդ ավետարան էր դարձել»:⁷ Թարգմանության լեզուն բարձր է դնահատել խստապահանջ ու բծախնդիր Նորայր Բյուզանդացին: Գր. Զիլինկիյանը հաղթահարել է լեզվաոճական րսովածիվ դժվարություններ և ստեղծել ավելի քան 500 նոր բառ, որոնց մի մասը պատճենել է ֆրանսերենից: Վեպի հայերեն հրատարակության առաջաբանում. նա գրում է. «Լեզվագետ ազգայինք միայն կրնան երևակայել, թե թարգմանիչ մը որքան նեղություն և աշխատություն կը կրե այսպիսի եվրոպական գիրք մը հայերենի թարգմանելու համար: Մասնավորապես Թշվառները մեջ կը վիտան այս դժվարությունները, որոնց առաջինն է գտնել, կազմել, բարդել կամ հարմարցնել այնպիսի բառեր, որոնք հայ մատենագրությանց և բառարաններու մեջ չկան: Այս տեսակ բառերու առջև ստիպվեցանք ֆրանսերենն ալ դնել»:⁸ Ահա այդ բառերից մի քանիսը. ազատական - *discretionnaire*, ամբողջարար - *complémentaire*, ավանարնակ - *faubourien*, արտաբուրել - *exhaler*, կայմապահ - *gabier*, համակիզում - *conflagration*, հանրավորել - *universaliser*, հետնաբակ - *arrière-cour*, նորարույթ - *convalescent*, վիրակիր - *balafre* և այլն:

Այսօր օրինական հպարտությամբ կարող ենք նշել, որ Գր.Զիլինկիյանի անձնվեր աշխատանքի շնորհիվ հայ ընթերցողն այս հմուտ ու ճաշակով կատարված թարգմանության միջոցով կարողացել է առաջինների

⁶ Писатели Франции. Составитель Е.Г.Еткинд, М., 1964, с.336.

⁷ Նույն տեղում:

⁸ Victor Hugo, Chateaubriand et Lamartine dans la littérature arménienne. Poemes, articles, discours reunis et traduits par Archag Tchobanian, Paris, 1932, p.67.

⁹ Վ.Հյուգո, Թշվառներ, հ.Ա., Գր.Զիլինկիյան, Զմյուռնիա, 1868:

թվում ծանոթանալ Վ.Հյուգոյի նշանավոր ստեղծագործությունը: Աշխատանքն ավարտելուց հետո Գր.Զիլինկիլյանը Վ.Հյուգոյին հղած նամակում ցանկություն է հայտնել «Թշվառներ»-ի թարգմանությունը ձոնել նրան և հեղինակից ստացել է հետևյալ սլատասխանը, որ գետեղված է երկի հայերեն հրատարակության սկզբում:

«Ես Ձեր հնամենի լեզուն չգիտեմ, բայց սիրում եմ այն: Նրա մեջ ես գգում եմ արևելքը և նշմարում դարերը: Նրա մեջ ես տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի ճառագայթումը:

Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվել: Երախտագիտություն մը ընդունում եմ Ձեր ազնիվ ձոնը և շնորհակալություն հայտնում:

Վիկտոր Հյուգո»

«Թշվառներ»-ի արևելահայերեն թարգմանությունը լույս է տեսել շատ ավելի ուշ՝ 1940-1951 թվականներին, Վահե Միքայելյանի թարգմանությունով:

Ֆրանսիացի հեղինակների երկերն ու դրանց թարգմանությունները հավասարապես իրենց ազդեցությունն ունեցան ինչպես հայ գրականության, այնպես էլ հայ գիտական մտքի և հայոց լեզվի վրա: Խոսելով XIX դ. և, մանավանդ, նրա երկրորդ կեսին եվրոպական հեղինակների գործերի հայերեն թարգմանվելու մասին՝ Հ.Աճառյանը գրում է. «Մի ամբողջ գրականություն հայերենի վերածվեց: Ժողովուրդը կարդաց, լսեց այդ վեպերը անհուն հետաքրքրությամբ. ընթերցանությունը պահանջ դարձավ, և այդ ընթերցասիրության արդյունքն եղավ աշխարհաբար գրական հայերենի համատարած ուսումը: Առանձին ուսումնասիրության նյութ է կազմում այս կարգի վեպերի թարգմանության և թարգմանիչների պատմությունը»¹⁰:

Գրական թարգմանությունների այս ընդհանուր հոսքի մեջ առանձնակի տեղ ունեն Հյուգոյի արձակ ստեղծագործությունները, որոնցում արծարծված գաղափարները համահունչ էին ժամանակի ոգուն ու հոգեհարազատ մեր ժողովրդի բաղձանքներին:

ПЕРВЫЕ АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ ПРОЗЫ ВИКТОРА ГЮГО

(К 200-летию со дня рождения)

А.К.БАРЛЕЗИЯН

Р е з ю м е

В истории армяно-французских культурных связей особо выделяется XIX век и его вторая половина, когда была издана богатая переводная литература с французского языка на армянский (60000 страниц). С особым интересом и любовью армяне читали и переводили произведения В.Гюго. Только в 60-80гг. XIX века объем этих переводов достиг 220 печатных листов («Отверженные», «Собор Парижской богоматери» и т.д.). Переводы произведений французских писателей сыграли важную роль не только в общекультурном плане, но и в области обогащения словарного запаса армянского языка.

¹⁰ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 2-րդ, Ե., 1951, էջ 496: